ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

«06» նոյեմբերի 2023թ № 5307-Ա

## «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև այն, որ «Դոնեռ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ չի շտկել դիմում-հայտարարությունը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որոնք ներկայացված էին «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան.

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ՝

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած «Դոնեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01052798, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Գայի 51/5) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կայացած բացման և գնահատման նիստին ընդունված որոշման համաձայն՝ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

06.11.2023

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ
Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100